


Եթե Դուք օգտվում եք Medicare և Medi-Cal ծրագրերից, ապա տեղեկացե՛ք նաև Cal MediConnect առողջության ապահովագրության նոր ծրագրին:



Ի՞նչպես կարող է Cal MediConnect ծրագիրն օգնել ինձ Լուս Անջելեսի համայնքում:

- Medicare և Medi-Cal ծրագրերի առավելությունները կգործեն համատեղ:
- Ձեր բժիշկները, դեղագործները և Ձեր առողջությամբ զբաղվող այլ մանագետները կհամակարգեն Ձեր բուժումը՝ օգնելով Ձեզ մնալ առողջ:
- Դուք կստանաք Ձեր կարիքների, կանխարգելիչ բուժման, ինչպես նաև ծառայությունների ամբողջական վերլուծություն Ձեր տանը և համայնքում երբ կամենաք, այլ ոչ թե շտապ օգնության սենյակներում, հիվանդանոցներում և մասնավոր կլինիկաներում:
- Ձեր բուժման որակը կբարձրանա. Ձեր բուժման համակարգումը կմեծացնի Ձեր բարեկեցությանն ուղղված ջանքերը, կկրճատի անտեղի ստուգումներն ու դեղամիջոցների ընդունումը:
- Ձեզ կտրամադրվեն լրացուցիչ առավելություններ՝ ներառյալ տեսողության ապահովագրում և տեղափոխման ծառայություններ:

Զանգահարեք Ձեր համայնքի Cal MediConnect ծառայությանը՝ ստուգելու արդյո՞ք Ձեր սպասարկող բժիշկը, հիվանդանոցը կամ այլ մասնագետ ներառված է Cal MediConnect ցանցում:

L.A. Care Cal MediConnect Plan	1-888-522-1298
CareMore Cal MediConnect Plan	1-888-350-3447
Care1 st Cal MediConnect Plan	1-888-905-3825
Health Net Cal MediConnect	1-888-788-5395
Molina Dual Options	1-855-665-4627

PACE-ը կարող է լինել տարբերակ, եթե Դուք համապատասխանում եք պայմաններին:

Կապվե՛ք Ձեր տեղական համայնքի PACE ծառայությանը.

AltaMed Senior BuenaCare	1-877-462-2582 Brandman
կենտրոններ տարեցների խնամքի համար	1-818-774-3065

Որևէ ծրագրում ընդգրկվելու համար զանգահարեք.

Բուժման տարբերակներ (844) 580-7272
TTY: (800) 430-7077

Որտե՞ղ կարող եմ դիմել առավել օգնություն ստանալու համար



Ձեր տարբերակների վերաբերյալ անվճար և անհատական աջակցություն ստանալու համար.

Զանգահարե՛ք Առողջության ապահովագրության խորհրդատվության ու աջակցության ծրագրին (Health Insurance Counseling and Advocacy Program - HICAP):

(213) 383-4519

TTY: 711

Թեժ գիծ. 1-800-434-0222

Գործելու է 2014թ. ապրիլի 1-ից

Եթե Դուք ընդգրկված եք Cal MediConnect ծրագրում և ցանկանում եք ստանալ լրացուցիչ աջակցություն.

Cal MediConnect օմբուդսմենի ծրագիրն սկսվում է 2014թ. ապրիլի 1-ից, որով ծրագրում ընդգրկվածներին կտրամադրվի օգնություն լավագույն տարբերակն ընտրելու հարցերի և ըստ անհրաժեշտության բողոքների ու բողոքարկումների հայտեր լրացնելու վերաբերյալ:

Cal MediConnect օմբուդսմենը կտրամադրի նաև հետևյալ ծառայությունները.

- Cal MediConnect ծրագրի առնչությամբ ծրագրում ընդգրկվածների խնդիրների/բողոքների ուսումնասիրում, բանակցում և լուծում,
- Ըստ անհրաժեշտության ծրագրում ընդգրկվածների ուղղորդում դեպի համապատասխան մարմիններ և ծրագրերի՝ ներառյալ, սակայն չսահմանափակվելով հետևյալով. Կառավարվող բժշկական սպասարկման վարչություն (Department of Managed Health Care - DMHC), Առողջության ապահովագրության խորհրդատվության և աջակցության ծրագրեր (Health Insurance Counseling and Advocacy Programs - HICAPs), Պաշտպանության և աջակցության պետական ծրագրեր (State Protection and Advocacy Programs), Տարեցների և հաշմանդամների ռեսուրսների կենտրոններ (Aging and Disability Resource Centers - ADRCs), Սպառողների պաշտպանության ծրագրեր (Consumer Assistance Programs), Իրավաբանական ծառայությունների ծրագրեր (Legal Services Programs):

Զանգահարե՛ք Cal MediConnect օմբուդսմենի ծրագրին.

(855) 501-3077

[Գործելու է 2014թ. ապրիլի 1-ից]